ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 595 – Ա **25 նոյեմբերի 2019 թ.**

ՄԱՐԶԱՅԻՆ (ՏԵՂԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահմանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգ>>-ի 6-րդ և 24-րդ կետերը

որոշում եմ՝

1. Նկատի ունենալով ընթացիկ տարվա բնակլիմայական բարենպաստ պայմանները << Գեղարքունիքի մարզի մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման ժամկետը երկարաձգել մինչև 2019 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Արմեն Զոհրաբյանին:

25.11.2019

ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

քաղ. Գավառ